



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐ**

Երևան 2008

Բովանդակություն

Ներածություն

I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները

IV. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար անհրաժեշտ այլ դրույթներ

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետև նաև՝ Հանձնաժողով) 2009 թվականի տարեկան գործունեության ծրագիրն (այսուհետև՝ Ծրագիր) սպառնում է Հանձնաժողովի 2002-2008 թվականների տարեկան գործունեության ծրագրերի շարունակականությունը և նպատակ ունի ծրագրավորվող տարվա ընթացքում ապրանքային շուկաներում պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը:

Ծրագիրն ամրագրում է Հանձնաժողովի նպատակները, խնդիրները և ապրանքային շուկաներում մրցակցության զարգացման գերակա ուղղությունները, ինչպես նաև ելնելով ապրանքային շուկայի առանձնահատկություններից, սահմանում է ուսումնասիրված ապրանքային շուկաներում մրցակցության զարգացման համար անհրաժեշտ միջոցառումները:

I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

Հանձնաժողովի կողմից տնտեսության մրցակցային իրավիճակը, մասնավորապես, ապրանքային շուկայի համակենտրոնացման աստիճանը, մասնակիցների թիվը, գերիշխող դիրքի առկայությունը գնահատվել է ապրանքային շուկաների ուսումնասիրությամբ և նախորդ տարիներին ուսումնասիրված շուկաներում դիտանցմամբ: Այսպես, Հանձնաժողովը 2008 թվականի հունվարից մինչև սեպտեմբերը ուսումնասիրել է 23 ապրանքային շուկա (աղյուսակ 1), և դիտանցում է իրականացրել կենտրոնացված գրանցամատյանում գրանցված 96 ապրանքային շուկաներում (օգտագործելով գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից տրամադրված տվյալները), անդրադարձել և բացահայտել է մի շարք ապրանքային շուկաներում իրացման գների կիրառման քաղաքականությանը՝ հնարավոր հակամրցակցային համաձայնություններ հայտնաբերելու նպատակով:

Մրցակցային իրավիճակի ուսումնասիրության համար ապրանքային շուկաների ընտրությունն իրականացվել է՝ հիմք ընդունելով նախորդ տարում ուսումնասիրության ժամանակ առաջացած խնդիրները, գերիշխող դիրքի վերանայման վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների դիմումները, գերիշխող դիրք ունեցող կամ խոշոր ընկերությունների լուծարման փաստը: 2008 թվականին ուսումնասիրված ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակը ներկայացված է աղյուսակ 1-ում:

**Մի շարք ապրանքային շուկաների առաջատար սուբյեկտները և մրցակցային իրավիճակը
բնութագրող առանձին ցուցանիշները**

Աղյուսակ 1

Ապրանքային շուկայի անվանումը	Ուսումնասիրված ժամանակահատվածը	Առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի անվանումը	Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը	Համակենտրոնացման աստիճանը****	
				տոկոս	աստիճանը
1. «Պաստերացված և ստերիլիզացված մանրէազերծված կաթ»	2007թ.	«Աշտարակ կաթ» ՓԲԸ*	34	70.34	բարձր
2. «Թթվասեր»	2007թ.		18	84.66	բարձր
3. «Պաղպաղակ»	2007թ.	«Աշտարակ կաթ» ՓԲԸ** «Շանթ Պլյուս» ՍՊԸ**	14	78.19	բարձր
4. «Բրինձ»	2008թ. 1-ին կիս.	«Կարի թով» ՍՊԸ** «Մոկոնաթ» ՍՊԸ**	19	66.6	միջին
5. «Հավի ձու՝ կենտով»	2007թ.	«Լուսակերտի ՏԹՖ» ՍՊԸ*	12	85.9	բարձր
6. «Սառեցրած ձկներ»	2007թ.	«Սալեքս Գրուպ» ՍՊԸ*	11	72.36	բարձր
7. «Տնտեսական օճառ»	2007թ.	«Մոնա Գրուպ» ՍՊԸ*	13	88.8	բարձր
8. «Լվացքի փոշի (ձեռքով լվացքի համար)»	2007թ.	«Մոնա Գրուպ» ՍՊԸ	45	46.23	միջին
Դեղամիջոցներ					
9. «Անզգայնացող դեղեր»	2007թ. 1-9 ամիս	«Վագա-ֆարմ» ՍՊԸ	23	45.74	միջին
10. «Ակնաբուժական դեղեր»	2007թ. 1-9 ամիս	«Ալֆա ֆարմ» ՍՊԸ	25	55.3	միջին
11. «Ալերգիայի, անաֆիլաքսիայի ժամանակ կիրառվող դեղեր»	2007թ. 1-9 ամիս	«Ֆարմատեք» ՓԲԸ** «Ալֆա ֆարմ» ՍՊԸ**	24	60.1	միջին
12. «Սիրտանոթային դեղեր»	2007թ. 1-9 ամիս	«Ալֆա ֆարմ» ՍՊԸ	34	59.1	միջին
13. «Հակավարակային դեղեր»	2007թ. 1-9 ամիս	«Ալֆա ֆարմ» ՍՊԸ	32	57.9	միջին
14. «Հոգեմետ դեղեր»	2007թ. 1-9 ամիս	«Արփիմեդ» ՀՉ ՓԲԸ	18	51.6	միջին
15. «Ստամոքսաղիքային դեղեր»	2007թ. 1-9 ամիս	«Ալֆա ֆարմ» ՍՊԸ	28	50.0	միջին
16. «Վարակազերծիչներ և հականեխիչ միջոցներ»	2007թ. 1-9 ամիս	«Նյու Ինտերնեյշնլ Բիզնես ֆարմ» ՍՊԸ*	20	63.1	միջին
17. «Մաշկային հիվանդությունների դեպքում կիրառվող դեղեր (տեղային)»	2007թ. 1-9 ամիս	«Ֆարմատեք» ՓԲԸ*	25	64.9	միջին
18. «Ցավազրկող, տենդամարիչ, ոչ ստերիոդային հակաբորբոքային, հակահոդատապային դեղեր, ռևմատիկ բարդությունների ժամանակ կիրառվող ձևափոխիչներ»	2007թ. 1-9 ամիս	«Ալֆա ֆարմ» ՍՊԸ*	31	63.9	միջին
19. «Հեռուստացույցներ»	2007թ. 1-ին կիս.	«Փրիթի Ռեյ» ՍՊԸ* «Արայ» ՍՊԸ*	67	74.0	բարձր
20. «Կենցաղային սառնարաններ»	2007թ. 1-ին կիս.	«Արայ» ՍՊԸ	48	49.81	միջին
21. «Առևտրային նպատակով օգտագործվող	2007թ. 1-ին կիս.	«Սիլվի Էյ Ջի» ՍՊԸ	25	25.39	ցածր

	սառնարաններ»					
22.	«Կենցաղում օգտագործվող լվացքի մեքենաներ»	2007թ. 1-ին կիս.	«Փրիթի Ուեյ» ՍՊԸ	43	58.81	միջին
23.	«Ազոտական պարարտանյութեր (ամոնիումային սելիտրա)»	2007թ.	«Դվին Հոլդինգ» ՓԲԸ*** «Ազոտինվեստ» ՓԲԸ***	4	96.9	բարձր

* տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում ունի գերիշխող դիրք, իրացման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը:
 ** ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում ունի գերիշխող դիրք, իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը:
 *** նշված տնտեսվարող սուբյեկտները համարվել են անձանց խումբ՝ մեկ տնտեսվարող սուբյեկտ
 **** Շուկան ունի համակենտրոնացման բարձր աստիճան, եթե $70\% \leq CR-3 \leq 100\%$, միջին աստիճան, եթե $45\% \leq CR-3 < 70\%$ ցածր աստիճան, եթե $CR-3 < 45\%$: CR-3 տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

Նշված ապրանքային շուկաների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեղական արտադրության ապրանքներով գերակշիռ ծավալների հաշվին գործող բոլոր շուկաները¹ բարձր կենտրոնացված են և դրանցում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: Գերազանցապես ներմուծման հաշվին գործող շուկաներում² գերակշռում են միջին կենտրոնացված ապրանքային շուկաները թվով 14, իսկ 4-ը՝ բարձր կենտրոնացված են, մեկ ապրանքային շուկա ցածր կենտրոնացված է: Ընդհանուր առմամբ, նշված 23 ապրանքային շուկաներում կենտրոնացվածության իրավիճակը հետևյալն է՝ 1 ապրանքային շուկա ցածր կենտրոնացված է, 14 ապրանքային շուկա միջին կենտրոնացված են և 8 ապրանքային շուկա բարձր կենտրոնացված են: Գերազանցապես ներմուծման հաշվին գործող 19 ապրանքային շուկաներից 10-ում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: Ընդհանուր առմամբ, 23 ուսումնասիրված ապրանքային շուկաներից գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ առկա են 14 ապրանքային շուկաներում, ընդ որում՝ երեքում կա համատեղ գերիշխում³:


Ինչ վերաբերում է ապրանքային շուկաներում գործող մասնակիցների թվին, ուսումնասիրված ապրանքային շուկաներից 8-ում գործում են 11-20 տնտեսվարող սուբյեկտ, 6 ապրանքային շուկայում գործում են 21-30 տնտեսվարող սուբյեկտ, 4 ապրանքային շուկայում գործում են 21-40 և 40-ից ավելի տնտեսվարող սուբյեկտ և միայն «Ազոտական պարարտանյութեր (ամոնիումային սելիտրա)» ապրանքային շուկայում գործում են 10-ից քիչ տնտեսվարող սուբյեկտներ:

Գծանկարներում (1, 2) ներկայացված են ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակը բնութագրող ցուցանիշները:

1 տեղական արտադրության ապրանքներով գերակշիռ ծավալների հաշվին գործող շուկաներն են՝ «Պատերիվագցված և ստերիլիզացված մանրէազերծված կաթ», «Թժվասեր», «Պաղպաղակ», «Հափ ձու՝ կճեպով»
 2 գերազանցապես ներմուծման հաշվին գործող շուկաներն են՝ «Բրինձ», «Սառեցրած ձկներ», «Տնտեսական օճառ», «Լվացքի փոշի(ձեռքով լվացքի համար)», «Անճաղանցող դեղեր», «Ալմաբուժական դեղեր», «Ալերգիայի, անաֆիլաքսիայի ժամանակ կիրառվող դեղեր», «Սիրտանոթային դեղեր», «Հակավարակային դեղեր», «Հոգեմետ դեղեր», «Ստամոքսաաղիքային դեղեր», «Վարակազերծիչներ և հականեխիչ դեղեր», «Մաշկային հիվանդությունների դեպքում կիրառվող դեղեր (տեղային)», «Ցավազրկող, տենդամարիչ, ոչ ստերոիդային հակաբորբոքային, հակահոդատապային դեղեր, ռևմատիկ բարդությունների ժամանակ կիրառվող ձևափոխիչներ», «Հեռուստացույցներ», «Կենցաղային սառնարաններ», «Առևտրային նպատակով օգտագործվող սառնարաններ», «Կենցաղում օգտագործվող լվացքի մեքենաներ», «Ազոտական պարարտանյութեր (ամոնիումային սելիտրա)»
 3 Ապրանքային շուկայում իրացման (ձեռքբերման) առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք որպես իրացնող (ձեռքբերող) իրացման (ձեռքբերման) ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը:
 Ապրանքային շուկայում իրացման (ձեռքբերման) առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք որպես իրացնող (ձեռքբերող) իրացման (ձեռքբերման) ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երրորդը: (ՀՀ ՏՄՊ օրենք, հոդված 6, կետ 3,4)


Ուսումնասիրված ապրանքային շուկաներում համակենտրոնացման աստիճանը

գծանկար 1



Ուսումնասիրված ապրանքային շուկաներում գերիշխող դիրքի առկայությունը

գծանկար 2



Ապրանքային շուկաներում բարձր կենտրոնացվածության առկայության հնարավոր բացասական ազդեցության թուլացման համար էական նշանակություն ունի փոքր և միջին ձեռնարկություններին պետական աջակցությունը, որն ապահովում է տնտեսության մեջ կայուն վերարտադրությունը և մրցակցության զարգացումը: Փոքր ձեռնարկատիրության զարգացումը շուկայական հարաբերությունների և մրցակցության պայմաններում օբյեկտիվորեն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ տեղի ունեցող բարեփոխումների և նոր տնտեսական կառուցվածքների ձևավորման հիմնական ուղղություններից մեկը: Հարկ է նշել, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում փոքր ձեռնարկատիրության զարգացման հաստատուն միտում է նկատվում: Այսպես, եթե 2002 թվականին բնակչության 1000 շնչի հաշվով բաժին էր ընկնում 27 փոքր և միջին ձեռնարկություն, ապա 2007 թվականի սկիզբին այդ ցուցանիշը կազմել է 31: Նշված ժամանակահատվածում զգալի բարձրացել է ՓՄՁ զարգացման ինդեքսը՝ 58.1-ից հասնելով մինչև 237.2, այսինքն՝ այն աճել է 4.1 անգամ: Սակայն, եթե բնակչության 1000 շնչի հաշվով բաժին ընկնող ՓՄՁ-ների թիվը քանակային առումով հավասարվել է եվրոպական երկրների հետ, ապա տնտեսության նշված հատվածի գործունեության արդյունավետությունը էապես հետ է մնում այդ երկրներից: Այսպես, ՓՄՁ զարգացման միջինացված ցուցանիշը Արևելյան Եվրոպայի 10 երկրներում (որոնք նույնպես գտնվում են անցումային փուլում) կազմում է 2419.0, որը գերազանցում է Հայաստանի Հանրապետությունում այդ ցուցանիշը ավելի քան 10 անգամ: (Տեղեկագիր «Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2005-2006թթ.»)

Տնտեսական բարեփոխման կողմնորոշումն արտադրության օժանդակության և սոցիալական մթնոլորտի բարելավման ուղղությամբ պետք է ստեղծի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնարար պայմաններ, նվազեցնի նրա զարգացման ստվերային միտումը, հաշվի առնելով սոցիալական հիմքերը, որոնց հիման վրա կարող է զարգանալ տվյալ ոլորտը: Փոքր ձեռնարկատիրության օժանդակությանն ուղղված պետական քաղաքականության միջոցները սկզբունքային են մրցակցության զարգացման համար:

Մրցակցային օրենսդրությունը նախատեսված է շուկայական հարաբերությունների ձևավորված համակարգի համար, սակայն ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, այն ի վիճակի է նպաստել «գործող» մրցակցությանը ապրանքային շուկաներում, սահմանափակելով մենաշնորհ տնտեսվարող սուբյեկտների շուկայական իշխանությունը, սակայն ինքնին նա չի ստեղծում ազատ ձեռնարկատիրության համակարգ և մրցակցություն:

Ապրանքային շուկայի մրցակցային միջավայրի համար հիմնախնդիր են հակամրցակցային համաձայնությունները, քանի որ դրանք ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցնում են մրցակցության սահմանափակմանը և հանրապետության ապրանքային շուկաներում հիմնականում արտահայտվում են գների չհիմնավորված բարձրացմամբ և դրանց բարձր մակարդակի վրա հետագա պահպանմամբ:

Այսպես, հաշվի առնելով 2007 թվականի երկրորդ կիսամյակում աշխարհում, իսկ արդեն օգոստոսի վերջից սկսած ան Հայաստանում կարագի և բուսական յուղի իրացման գների բարձրացումը, Հանձնաժողովն իրականացրել է ուսումնասիրություններ կարագի և բուսական յուղի

զների բարձրացման պատճառները պարզելու նպատակով: Մի շարք տնտեսվարող սուբյեկտներ զգալիորեն և ոչ համարժեք բարձրացրել էին իրենց կողմից ներկրվող կարագի և բուսական յուղի իրացման գները այն պարագայում, երբ իրենց կողմից տվյալ ապրանքների ձեռքբերման գները մնացել են անփոփոխ կամ կրել են ոչ զգալի փոփոխություն: Ընդ որում, գները բարձրացել էին ոչ միայն իրացման այս օղակում, այլ նաև մանրածախ առևտրի օբյեկտներում՝ խանութներում: Հանձնաժողովը կարագի և բուսական յուղի իրացմամբ զբաղվող մի շարք տնտեսվարող սուբյեկտների անուղղակի համաձայնեցված գործողությունները (վարքագիծը)՝ իրացման գների չիմնավորված բարձրացումը, րակեց որպես հակամրցակցային համաձայնություն և նրանց նկատմամբ նշանակեց տուգանք, որի արդյունքում կանխվեց տնտեսվարող սուբյեկտների կողմից նման գնային քաղաքականությունը:

Միաժամանակ, արդիական է մնում ուղղահայաց համաձայնությունների հայտնաբերման հիմնախնդիրը, որոնք կնքվում են տարբեր ապրանքային շուկաներում (հարակից ապրանքային շուկաներում): Դրանք այն ապրանքային շուկաներն են, որտեղ տնտեսվարող սուբյեկտները գործում են հետևյալ ընդհանուր շղթայով հումք-ապրանք-վերջնական սպառող: Օրինակ, այդպիսի շղթա ստեղծվել է հացամթերքի ապրանքային շուկաներում: Հացահատիկ ներկրող գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտները ունենալով արադացներ, հացաթխման գործարաններ ու խանութներ, ընդհանուր շղթայում առաջացնում են սուբյեկտի գործունեության վարքագծի վերահսկման համար ապացուցողական բազայի հավաքագրման բարդությունները. տվյալների անհավաստիություն և, որպես հետևանք՝ հարկային վարչարարության ցածր արդյունավետություն: Արդյունքում, անհնար է դառնում գների բարձրացման զսպումը միայն տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությամբ:

Հիփոթեքային և տրանսպորտային միջոցների վարկավորման ընթացքում որոշակի ապահովագրական և գնահատող ընկերությունների նախապատվություն տալու միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի կողմից հորիզոնական հակամրցակցային համաձայնությունների կնքումը (կայացումը) հանդիսանում է որոշակի նպատակաուղղված գործողությունների կամ վարքագծի կիրառում, որոնք հանգեցնում կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

Ելնելով վերոգրյալից, ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության նպատակով տնտեսական մրցակցության պաշտպանման և խրախուսման, բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովման, հակամրցակցային գործունեության կանխարգելման, սահմանափակման և նախազգուշացման, ինչպես նաև տնտեսական մրցակցության պաշտպանության նկատմամբ վերահսկողության նպատակով, հիմք ընդունելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հանձնաժողովը նախազգուշացրել ինը բանկերի՝ հանձնարարելով շտկել և հետագայում բացառել համաձայնեցված գործողությունների (վարքագծի) միջոցով հակամրցակցային համաձայնությունների կնքումը (կայացումը)՝ արտահայտված լրացուցիչ պայմանների սահմանմամբ ապահովագրական ընկերությունների շուկա մուտք գործելուն խոչընդոտելով (շուկա մուտք գործելը սահմանափակելով) կամ շուկայից նրանց դուրս մղելով, ինչպես նաև այնպիսի պայմանների առաջարկմամբ կամ

կիրառմամբ, որոնք ապահովագրական և գնահատող ընկերությունների համար առաջացնում են կամ կարող են առաջացնել մրցակցային անհավասար պայմաններ:

Հանձնաժողովը իրականացնում է մրցակցության օրենսդրության տեսանկյունից մենաշնորհ կամ օլիգոպոլ տիպի ապրանքային շուկաներում գնագոյացման վերահսկողություն, այդպիսով պետության համար հնարավորություն է ստեղծվում կանխել գերիշխող (մենաշնորհ) դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների չարաշահումները: Մասնավորապես, Հանձնաժողովը 2007 թվականի վերջին և 2008 թվականի սկզբին ընդունել է որոշումներ, որոնցով ապրանքային շուկաներում գործող ինչպես գերիշխող դիրք ունեցող, այնպես էլ մյուս տնտեսվարող սուբյեկտներին նախազգուշացրել է ձեռնպահ մնալ գերիշխող դիրքի չարաշահման հանգեցնող և հակամրցակցային համաձայնությունների արդյունքում այնպիսի գների սահմանումից և կիրառումից, որոնք կարող են հանգեցնել ապրանքային շուկաներում մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը, ինչպես նաև ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապրանքների իրացման գների չիմնավորված բարձրացման, պահպանման և չիմնավորված գների սահմանման կամ կիրառման քաղաքականության իրականացումը կանխելու և վերացնելու ուղղությամբ: Այդ նպատակով Հանձնաժողովի կողմից ապրանքային շուկաներում 2007 թվականի 4-րդ եռամսյակում և 2008 թվականին իրականացվել են ապրանքների գների փոփոխությունների ուսումնասիրություններ, որոնք դեռևս ընթացքի մեջ են, մասնավորապես՝ իրականացվել է 32 պարենային ապրանքների մանրածախ գների 2007 թվականի դեկտեմբեր և 2008 թվականի հունվար – սեպտեմբեր ամիսների մոնիտորինգի արդյունքների շարունակական ամենօրյա վերլուծություն:

Ընդ որում, նվազ կարևոր չէ նշել, որ մենաշնորհ և գերիշխող դիրք ունեցող մի շարք տնտեսվարող սուբյեկտների՝ օրենսդրության հանդեպ ունեցած (հիմնականում արտադրողներ) պատասխանատվության գիտակցումը բերում է նրան, որ տնտեսվարող սուբյեկտները իրացման գների նախատեսվող բարձրացումների հիմնավորվածության մասին եզրակացություն ստանալու համար դիմում են Հանձնաժողով: Մասնավորապես, Հանձնաժողովը ի գիտություն է ընդունել ցեմենտի, գաջի, կերակրի աղի գների 15-20 տոկոսի սահմաններում բարձրացման մասին տեղեկատվությունը պայմանավորված բնական գազի գների բարձրացմամբ:

Մյուս դեպքում, «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ընկերության ներկայացրած ավիավառելիքի գնի փոփոխությունը հիմնավորող տեղեկանքի հիման վրա Հանձնաժողովն ընդունելի է համարել ընկերության առաջարկած ձեռքբերման և իրացման գների տարբերությունը (մարժան) և այդ պայմաններում նշված իրացման գինը:

Մենաշնորհ և գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից գների հիմնավորվածության հարցը շարունակում է մնալ Հանձնաժողովի գործառույթների գերակա ուղղություններից մեկը: Այսպես, պետության կողմից սուբսիդավորման վերացումից հետո գազի իրականում վճարվող գինը 1 խ.մ. համար բարձրացավ մոտ 16 դրամով, իսկ գազալցակայաններում իրացման գինը (ԱԳ-ԼՃԿ-ում) բարձրացավ 130 դրամից մինչև 200 դրամի՝ 1 խ.մ. համար: Հանձնաժողովի նախազգուշացնող որոշումը ունեցավ իր դրական հետևանքը տվյալ ապրանքային շուկայում: Հանձնաժողովի արձագանքի արդյունքում, իրացման գինը 200 դրամից նվազեց մինչև 160 դրամի:

Տնտեսական մրցակցության օրենսդրության համաձայն, ապրանքային շուկայում տնտեսվարող սուբյեկտների գերիշխող դիրք ունենալը չի համարվում օրենսդրության խախտում: Վարչական պատասխանատվության են ենթարկվում միայն այն ընկերությունները, որոնք չարաշահում են իրենց գերիշխող դիրքը: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից տարբեր տեսակի չարաշահումների հայտնաբերումը և պատասխանատվության միջոցի կիրառումը հանդիսանում է Հանձնաժողովի կարևոր խնդիրներից մեկը և 2008 թվականի հունվարից մինչև սեպտեմբերի 1-ը Հանձնաժողովը հայտնաբերել և համապատասխան որոշումներ է կայացրել գերիշխող դիրք ունեցող երկու սուբյեկտների վերաբերյալ: Երկու դեպքերում էլ՝ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտները ստեղծել էին մուտքի խոչընդոտներ, պայմանագրի կողմին լրացուցիչ պարտավորությունների պարտադրմամբ կամ կիրառելով չհիմնավորված (կամ մենաշնորհ բարձր գներ), ինչը ինքնին խոչընդոտում է շուկայական հարաբերությունների զարգացման ընթացքը:

Այսպես, «Ինտերնետ ծառայություններ» ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության գործողությունները (վարքագիծը)՝ այլ տնտեսվարող սուբյեկտների առևտրի կամ արտադրության արդիականացման կամ ներդրումների սահմանափակումը, պայմանագրի կողմին լրացուցիչ պարտավորությունների պարտադրումը, որոնք իրենց բնույթով կամ իրականացման տեսանկյունից չեն առնչվում պայմանագրի բուն առարկայի հետ, այլ տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելուն խոչընդոտելը (սահմանափակելը), որի հետևանքով այլ տնտեսվարող սուբյեկտներ մուտք չեն գործել շուկա, ինչպես նաև այնպիսի պայմանների առաջարկը կամ կիրառումը, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել մրցակցային անհավասար պայմաններ այն դեպքում, երբ համանման պայմաններ չեն առաջարկվել տվյալ ապրանքային շուկայում գործող մյուս տնտեսվարող սուբյեկտներին, որոնք արտահայտվել են բաշխիչ ցանցը «Հայ-Լայն» ծառայությունը կամ դրա նման ծառայություն մատուցելու համար ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող այլ ընկերություններին և ցանցի օպերատորներին վարձակալությամբ տրամադրելուց հրաժարվելով, ինչպես նաև Հրապարակային պայմանագրի դրույթով արգելելով ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող այլ ընկերություններին և ցանցի օպերատորներին՝ «Հայ-Լայն» ծառայությունը երրորդ անձանց հատուցմամբ կամ անհատույց առաջարկելու կամ այն օգտագործելու էլեկտրոնային հաղորդակցության այլ ծառայություններ մատուցելու նպատակով, Հանձնաժողովի կողմից որակվել է որպես գերիշխող դիրքի չարաշահում և նշանակվել է տուգանք:

Ջանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա Հանձնաժողովը հարուցել է վարչական վարույթ, որի արդյունքում հայտնաբերվել է «Ազոտական պարարտանյութեր» ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի կողմից մրցակցության օրենսդրության խախտում: Այսպես, «Դվին Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերության կողմից հողօգտագործողներից բացի, այլ անձանց 2008 թվականի մարտին ազոտական պարարտանյութի մեկ տոննան 111430 դրամ գնով իրացնելը որակվել է իրացման չհիմնավորված գնի սահմանում և կիրառում, ինչպես նաև նույն ժամանակահատվածում հողօգտագործողներին ազոտական պարարտանյութի մեկ տոննան 84000 դրամ գնով (14,45 % շահութաբերությամբ), իսկ

հողօգտագործողներից բացի, այլ անձանց՝ 114430 դրամ գնով (40,85 % շահութաբերությամբ) իրացնելը որակվել է որպես որպես խտրական (տարբերակված) գնի սահմանում և կիրառում՝ գերիշխող դիրքի չարաշահում և նշանակվել տուգանք:

Մոնոպոլիզացիայի մակարդակի նվազումը և մրցակցային միջավայրի զարգացումը առաջին հերթին կապված է նոր տնտեսվարող սուբյեկտների համար շուկա մուտք գործելու խոչընդոտների պակասեցմամբ կամ վերացմամբ: Ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ խոչընդոտները ստեղծվում են գլխավորապես անցումային տնտեսության ժամանակահատվածի գործոնների պատճառով, այլ ոչ թե շուկայական ուժերի գործողությունների հետևանքով: Եական խոչընդոտներից են հանդիսանում ոչ տնտեսական բնույթի գործոնները, իշխանության մարմինների և խոշոր ձեռնարկությունների միջև արդեն կայացած ոչ ֆորմալ հարաբերությունները:

Մոնոպոլիզացիայի զսպման մեկ այլ ձև է կանխարգելիչ միջոցառումների կիրառումը, այսինքն՝ ձեռնարկությունների փայաբաժինների ձեռքբերման խոշոր գործարքների նախնական վերահսկումը, որոնք կարող են հանգեցնել մրցակցային միջավայրի, ինչպես նաև ապրանքային շուկաներում մրցակցության պայմանների փոփոխման: Հետևաբար, Հանձնաժողովի խնդիրներից է հանդիսանում նաև ապրանքային շուկաներում համակենտրոնացման վերահսկումը, որին մինչ այժմ Հանձնաժողովը քիչ է անդրադարձել՝ դիմումների, համապատասխան տեղեկատվական բազայի բացակայության և օրենսդրության տարաբնույթ մեկնաբանության առկայության պատճառով:

Գլխավոր հիմնախնդիրներից է դեռևս մնում ապրանքային շուկաներում ստվերային շրջանառությունը, ինչը խոչընդոտում է մրցակցությանը, աղճատում է շուկայի մրցակցային իրավիճակը՝ ստեղծելով մրցակցային անհավասար պայմաններ և որպես հետևանք տուժում են շուկայի օրինապահ մասնակիցները: Ստվերի կրճատման նպատակով վերը նշված խնդիրների կարգավորման համար և հաշվի առնելով Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքները, Հանձնաժողովն առաջարկել է լուծել մի շարք վարչարարական հարցեր՝ ուղղված ամբողջ շղթայով հարկային գործընթացների փաստաթղթային ձևակերպմանը: Խնդիրը առնչվում է գործարքի մասնակիցների կողմից համապատասխան փաստաթղթերի ոչ բոլոր գործարքների ձևակերպմանը, ընդունմանը կամ տրամադրմանը: Տվյալ խնդիրն առավել արդիական է դառնում այն ժամանակ, երբ Հանձնաժողովը ուսումնասիրում է չիմնավորված գների փաստով տնտեսվարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի չարաշահման «գործերը»: Չիմնավորված գների փաստերի ապացուցման ամբողջ համակարգը կառուցվում է փաստաթղթային շրջանառության թափանցիկության վրա, իսկ դրա ոչ լիարժեքության, խեղաթյուրման դեպքում օրենսդրության խախտման փաստի ապացույցը դառնում է անհնար: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտները «բարեհաջող» օգտվում են գործող օրենսդրության անկատարությունից, ինչն այդ տնտեսվարող սուբյեկտներին հնարավորություն է ընձեռում ազդել շուկայական գների ձևավորման վրա, առանց որևէ լուրջ տնտեսագիտական հիմնավորումների:

Սննդամթերքի մեկ շնչի հաշվով սպառման տվյալների հաշվարկները վկայում են որոշ ապրանքային շուկաներում ստվերի առկայության մասին: Այսպես, Հանձնաժողովի կողմից ապրանքային շուկաների վերլուծության տվյալներով տարբեր տարիներին մեկ շնչի հաշվարկով, տարեկան կտրվածքով, ելնելով տվյալ ապրանքային շուկայի մասնակիցների կողմից ներկայացված

իրացման ծավալներից, հանրապետությունում սպառվել է՝ նրբերշիկ և սարդեկա՝ 0.2 կգ, երշիկեղեն՝ 0.8 և 0.9 կգ, մակարոնեղեն՝ 1.7 կգ, պաղպաղակ՝ 0.4, 0.5, 0.7 կգ: Ընդ որում, տվյալ դեպքում ընտրված են այն ապրանքները, որոնք չեն արտադրվում գյուղացիական տնտեսություններում (ի տարբերություն պանրի, կենդանական յուղի, թթվասերի, մսամթերքի), այդ պատճառով ներկայացված տվյալները կասկած չեն հարուցում:

Ստվերային շրջանառության առումով ռիսկային են նաև մի շարք արդյունաբերական շուկաները: Այսպես, շինարարության ծավալները (ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների) Հայաստանի Հանրապետությունում 2003 թվականին կազմել են 225931.2 մլն. դրամ և մինչև 2007թ. բարձր տեմպերով աճում էին, կազմելով 2007 թվականին՝ 667344.7 մլն. դրամ, որը 441413.5 մլն. դրամով, կամ 195.4 տոկոսով ավելի են, քան 2003 թվականին: Ցեմենտի ռեսուրսները հանրապետությունում 2003 թվականին կազմել են 349464 տոննա և 2004 թվականից անշեղորեն նվազում են՝ 2007 թվականին կազմելով միայն 236589.7 տոննա, որը 112874.3 տոննայով, կամ 32.3 տոկոսով պակաս են, քան 2003 թվականին: Այսինքն, նշված ժամանակահատվածում շինարարության ծավալների մոտ երեք անգամ աճի պարագայում, ցեմենտի ռեսուրսները հանրապետությունում պակասել են մոտ մեկ երրորդով: Շինարարության ծավալների կտրուկ աճի պայմաններում ցեմենտի իրացման ծավալները չեն համապատասխանում իրականությանը և մեծ հավանականությամբ կարելի է փաստել տվյալ շուկայում ստվերի առկայությունը: Նույնանման վիճակ առկա է նաև գաջի ապրանքային շուկայում:

Տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության առանձին և մասնավոր դեպք է տնտեսվարող սուբյեկտների կողմից կիրառվող անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերումը: Հատկանշական է, որ վերջին ժամանակաշրջանում ավելացել են ծառայությունների ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտներին վերաբերող անբարեխիղճ մրցակցության դեպքերը:

Հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում է գտնվում և կշարունակի գտնվել կենտրոնացված գրանցամատյանում ընդգրկված գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը (իրացման ծավալը, գինը, ինքնարժեքը, ինքնարժեքի կառուցվածքը և դրանց փոփոխությունները յուրաքանչյուր կիսամյակի կտրվածքով): 2008 թվականին կենտրոնացված գրանցամատյանում գրանցված գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից գործունեության վերաբերյալ ներկայացրած տեղեկատվության վերլուծության արդյունքում հայտնաբերվել են ապրանքային շուկայում տնտեսվարող սուբյեկտի գերիշխող դիրքի կորուստ, ապրանքային շուկայում հնարավոր չհիմնավորված (արհեստական) գնի սահմանում, թերի կամ ոչ հավաստի տեղեկատվություն, «ստվերի» հնարավոր առկայություն և դրանցով պայմանավորված տեղում ստուգում անցկացնելու անհրաժեշտություն: Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված մի շարք ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակը, որտեղ գործում են ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ, ներկայացված է աղյուսակ 2-ում:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված մի շարք ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակը բնութագրող ցուցանիշները կենտրոնացված գրանցամատյանում գրանցված տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ

աղյուսակ 2

Հ/Հ	Ապրանքային շուկայի անվանումը	Ուսումնասիրման ժամանակահատվածը	Շուկայի մասնակիցների թիվը	Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների թիվը	Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի մասնաբաժինը (%)		Շուկայի համակենտրոնացման աստիճանը (%)	
					բնեղեն	արժեք.	բնեղեն	արժեք.
1	2	3	4	5	6	7	8	9
1.	«Ցորենի ալյուր»	2006թ.	43	2	42.05/ 36.8	42.5/ 36.6	78.85	79.1
2.	«Բուսական յուղ (ձեթ)»	2007թ. I կիս.	28	3*	26.9/23 .3/20.6	26.1/25 .6/20.9	70.8	72.6
3.	«Շաքարավազ»	2006թ. I կիս.	21	1	91.4	92.4	99.9	99.9
4.	«Խմորիչ հացաթխման համար»	2006թ.	13	1	50.4	47.7	84.3	85.0
5.	«Մսամթերք»	2004թ.	32	1	32.2	46.2	63.2	68.6
6.	«Կարագ»	2006թ.	24	1	34.9	42.4	80.2	83.0
7.	«Պաղպաղակ»	2007թ.	14	2	30.7	24.6	78.1	82.8
8.	«Թթվասեր»	2007թ.	18	1	59.2	60.2	84.65	84.1
9.	«Պաստերիզացված և ստերիլիզացված (մանրէազերծված) կաթ»	2007թ.	34	1	57.0	61.4	70.3	70.8
10.	«Կերակրի աղ»	2004թ.	2	1	95.1	95.7	100.0	100.0
11.	«Զարաղ (կերային)»	2004թ.	1	1	100.0	100.0	100.0	100.0
12.	«Աղացած աղ (տեխնիկական)»	2004թ.	1	1	100.0	100.0	100.0	100.0
13.	«Ծխախոտ ֆիլտրով»	2003թ.	13	1	50.8		90.8	
14.	«Ծխախոտ առանց ֆիլտր»	2003թ.	6	1	92.3		99.6	
15.	«Հավի ձու կճեպով»	2007թ.	12	1	42.5		85.9	
16.	«Արդյունաբերական վերամշակման նպատակով ձեռքբերվող լոլիկ»	2003թ.	5	2	45.8		95.4	
17.	«Կարմրախայտ և իշխան ձկնատեսակներ»	2005թ.	36	1	36.0	35.1	58.2	57.0
18.	«Սառեցրած ձկներ»	2007թ.	11	1	46.5	33.1	72.3	65.0
19.	«Ադամաթուզ (քանան)»	2005թ.	5	2	51.0/ 48.9	48.7	100.0	99.9
20.	«Թեյ»	2005թ.	32	1	39.9	26.5	69.1	61.2
21.	«Սուրճ»	2005թ.	54	1	35.2	31.0	73.9	69.7
22.	«Բրինձ»	2008թ. 1-ին կիս.	19	2	32.0/ 27.6	23.7/ 24.8	66.6	55.3
23.	«Էթիլային սպիրտ»	2006թ.	21	1	91.0	90.8	96.2	96.1
24.	«Շամպայն և փրփրուն գինիներ»	2004թ.	11	1	94.2	95.6	97.3	97.6
25.	«Գարեջուր»	2004թ.	14	2	54.95/ 38.01	46.4/ 42.5	95.4	93.0
26.	«Արդյունահանված հանքային ջուր»	2006թ. I կիս.	6	1	95.1	95.6	98.9	99.1
27.	«Շշալցված աղբյուրի ջուր»	2006թ. I կիս.	5	2	44.8/ 42.8	53.2/ 31.7	97.4	97.2
28.	«Գազավորված, քաղցրացված ըմպելիք»	2005թ. I կիս	116	1	67.4	73.8	85.3	94.1
29.	«Ազոտական պարարտանյութեր»	2007թ.	4	2*	81.2	75.7	96.9	96.8

	(ամոնիումային սելիտրա)»							
30.	«Նատրիումի հիպոքլորիդ»	2004թ. I կիս.	1	1	100.0	100.0	100.0	100.0
31.	«Լոգանքի միջոցներ»	2004թ.	27	1	39.8	52.9	74.3	88.2
32.	«Տնտեսական օճառ»	2007թ.	13	1	46.3	52.0	88.7	88.5
33.	«Հեռուստացույցներ»	2007թ. I կիս.	67	2	52.9	43.3	74.0	69.6
34.	«Կենցաղում օգտագործվող էլեկտրական լամպեր»	2005թ.	128	1	43.4	47.7	78.0	77.4
35.	«Անհատական երկկոնտուրանի գազային ջեռուցման կաթսաներ»	2006թ.	21	2	50.2	42,8	75.6	70.3
36.	«Անհատական միակոնտուրանի գազային ջեռուցման կաթսաներ »	2006թ.	3	1	93.4	94.5	98.24	98.37
37.	«Բիտում»	2005թ.	20	1	74.3	76.7	96.6	97.4
38.	«Գազ»	2004թ.	2	2	55.72/ 44.2	60.4/ 39.5	100.0	100.0
39.	«Ցեմենտ»	2004թ.	2	2	57.5/ 42.4	57.5/ 42.4	100.0	100.0
40.	«Քաղաքացիական և բնակարանային շինարարության մեջ օգտագործվող ապակի»	2006թ.	27	1	36.5	39.8	82.6	85.5

29 ապրանքային շուկայում առկա է մեկ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ, 10 ապրանքային շուկայում առկա է համատեղ գերիշխում: Ներկայացված 40 ապրանքային շուկաներից, 35 ապրանքային շուկա բարձր կենտրոնացված է, 5 ապրանքային շուկա՝ միջին կենտրոնացված է: Նշված ապրանքային շուկաներից ոչ մեկը ցածր կենտրոնացված չէ: 11 ապրանքային շուկայում գործում են 1-ից մինչև 5 մասնակից, նույնքան շուկաներում գործում է 11-ից 20 մասնակից: 13 ապրանքային շուկայում մասնակիցների թիվը կազմում է 5-20, իսկ 5 ապրանքային շուկայում մասնակիցների թիվը 40-ից ավելի է:

Մրցակցային քաղաքականության զարգացման համակարգը ընդհանուր առմամբ իրականացնում է մրցակցային միջավայրի պահպանման և պաշտպանության խնդիրը, սակայն Հայաստանի Հանրապետության տնտեսությունում մրցակցության հիմնական բազային պայմանների իրավիճակը (շուկայական ենթակառուցվածքի ոչ զարգացած լինելը, իրավակիրառ և օրենսդրական բազայի անկատարությունը, դատական համակարգի ոչ արդյունավետությունը, կոռուպցիայի մասշտաբները, ընդունված օրենքների չկատարումը կամ վատ կատարումը, գործարար էթիկայի ցածր մակարդակը, առանձին ձեռնարկություններին արտոնությունների չհիմնավորված տրամադրումը, փոքր ձեռնարկատիրության որպես մրցակցային հարաբերությունների սուբյեկտային բազա ոչ զարգացած լինելը և այլն) վկայում է, որ հանրապետությունում մրցակցային միջավայրը զարգացած չէ:

Ծրագրում ներկայացված միջոցառումներն ուղղված են ազատ տնտեսական մրցակցության պաշտպանությանը և խրախուսմանը, բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովմանը, ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը:

II .Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

Հանձնաժողովը, հիմք ընդունելով սույն Ծրագրի առաջին գլխում ներկայացված տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և բացահայտված հիմնախնդիրները, ինչպես նաև հաշվի առնելով նախորդ տարիներին տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կուտակված փորձը, 2009 թվականին ծրագրում է իրականացնել տնտեսական մրցակցության քաղաքականությունը՝ հետևյալ գերակա ուղղություններով.

- գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների համաձայնեցված հակամրցակցային գործողությունների, անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում և դադարեցում,

- մրցակցության փաստարկման և քարոզչությանն ուղղված աշխատանքների ուժեղացում,
- ՀՀ կառավարության, նախարարությունների, գերատեսչությունների և այլ շահագրգիռ մարմինների հետ մրցակցային արդյունավետ քաղաքականության ոլորտում համատեղ գործողությունների իրականացում,

- պետական աջակցության տրամադրման նկատմամբ վերահսկողության մեխանիզմների ձևավորում՝ վերջինիս ազդեցությունը մրցակցության վրա հնարավորին նվազեցնելու նպատակով,

- աջակցություն տնտեսական մրցակցության օրենսդրության շրջանակներում հասարակության տեղեկացվածության ապահովմանը,

- պարենամթերքի, էներգակիրների և այլ ապրանքային շուկաներում համաձայնեցված հակամրցակցային գործողությունների, գերիշխող (մենաշնորհ) դիրքի չարաշահման բնույթի խախտումների բացահայտմանը և դադարեցմանն ուղղված գործողությունների ուժեղացում:

Տվյալ ուղղություններով գործողությունները Հանձնաժողովը ծրագրում է իրականացնել հետևյալ միջոցառումների միջոցով.

1. ապրանքային շուկաների տնտեսական մրցակցության իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ընդլայնում,

2. հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերում և դադարեցում, հաշվի առնելով նաև միջազգային փորձը,

3. ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրում և հնարավոր չարաշահումների հայտնաբերում,

4. համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն, արդյունավետ մեթոդների մշակում և կիրառում,

5. անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում և դադարեցում, հաշվի առնելով նաև միջազգային փորձը,

6. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում,

7. ազատ տնտեսական մրցակցությունը սահմանափակող վարչական խոչընդոտների հայտնաբերում և դադարեցում,

8. տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության պարզում, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտում,

9. զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին, տնտեսվարող սուբյեկտների դիմումներին օպերատիվ արձագանքում,

10. օրենքին հակասող պետական օժանդակության հայտնաբերում,

11. հասարակության տեղեկացվածության բարձրացում,

12. տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության լրամշակում:

Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

Աղյուսակ 3

h/h	Միջոցառում	Ժամկետ
1.	<i>Ապրանքային շուկաների տնտեսական մրցակցության իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ընդլայնում</i>	
	տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծություն՝ բնակչության կողմից սպառման կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքների ապրանքային շուկաներում,	տարվա ընթացքում
	ուսումնասիրված ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության իրավիճակի շարունակական դիտանցում և գնահատում:	
2.	<i>Հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերում և դադարեցում, հաշվի առնելով միջազգային փորձը</i>	
	իրացման կամ ձեռքբերման խտրական և (կամ) տարբերակված գների հայտնաբերմանն ուղղված դիտանցում և գնահատում,	
	ապրանքի գնի չհիմնավորված բարձրացման, իջեցման կամ պահպանման բացահայտմանն ուղղված դիտանցում և գնահատում,	
	միևնույն ապրանքային շուկայի որոշակի տարածքներում, որոշակի ծավալներով, տեսականիով, սպառողների կամ մատակարարների խմբերով ապրանքների շրջանառության սահմանափակման դեպքերի ուսումնասիրություն,	տարվա ընթացքում
	համաձայնեցված գործողությունների արդյունքում տնտեսվարող սուբյեկտների կողմից շուկայի մուտքի խոչընդոտների կամ շուկայից տնտեսվարող սուբյեկտներին դուրս մղելու փաստերի և այլ գործողությունների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն:	
3.	<i>Ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրում և հնարավոր չարաշահումների հայտնաբերում</i>	
	իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված, խտրական և (կամ) տարբերակված գների սահմանման, կիրառման, կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրման դեպքերի հայտնաբերում,	տարվա ընթացքում
	առանձին գործընկերների նկատմամբ խտրական պայմանների, լրացուցիչ պարտավորությունների պարտադրման դեպքերի հայտնաբերում,	

	գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից այլ գործողությունների բացահայտում, որոնք հանգեցնում են այլ տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելու խոչընդոտների (շուկա մուտք գործելը սահմանափակելու) կամ շուկայից նրան դուրս մղելուն:	
4.	<i>Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն, արդյունավետ մեթոդների մշակում և կիրառում</i>	
	տնտեսվարող սուբյեկտների միացումների կամ միաձուլումների, մեկ տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների կամ փայաբաժնի ձեռքբերման, ինչպես նաև մեկ այլ տնտեսվարող սուբյեկտի որոշումների կայացման կամ մրցունակության վրա ազդելու վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերում:	տարվա ընթացքում
	համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության արդյունավետ մեթոդների մշակում և կիրառում	
5.	<i>Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում և դադարեցում, հաշվի առնելով նաև միջազգային փորձը</i>	
	անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման նպատակով գովազդի ոլորտում մշտական դիտանցում,	տարվա ընթացքում
	քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների դիմումների, ՉԼՄ հրապարակումների հիման վրա ուսումնասիրությունների իրականացում,	
	անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման ուղղությամբ աշխատանքների իրականացում:	
6.	<i>Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում</i>	
	Հանձնաժողովի գործունեությունը կանոնակարգող օրենքների, ենթաօրենսդրական ակտերի և մրցակցային քաղաքականության կիրարկման ուղղությամբ պարզաբանման աշխատանքների իրականացում	տարվա ընթացքում
7.	<i>Ազատ տնտեսական մրցակցությունը սահմանափակող վարչական խոչընդոտների հայտնաբերում և դադարեցում</i>	
	պետական կառավարման մարմինների որոշումների նախագծերի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան եզրակացությունների տրամադրում	տարվա ընթացքում
	տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված տնտեսական մրցակցության խնդիրներին առնչվող ակտերի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան եզրակացությունների տրամադրում	
	պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից Օրենքին հակասող գործողությունների վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների դիմումների ուսումնասիրություն	
	Օրենքի խախտման համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառում	
8.	<i>Տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության պարզում, տնտեսվարող սուբյեկտի փաստացի</i>	

	<i>գործունեության բացահայտում</i>	
	Օրենքով սահմանված կարգով հետազոտության, ստուգման, ուսումնասիրության և (կամ) դիտանցման իրականացում:	
9.	<i>ՁԼՄ հրապարակումներին, տնտեսվարող սուբյեկտների դիմումներին օպերատիվ արձագանքում</i>	տարվա ընթացքում
10.	<i>Տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ օրենքին հակասող պետական օժանդակության հայտնաբերումը</i>	տարվա ընթացքում
11.	<i>Հասարակության տեղեկացվածության բարձրացում</i>	
	զանգվածային լրատվության միջոցներով Հանձնաժողովի աշխատանքների պարբերական լուսաբանում	տարվա ընթացքում
	տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության պահանջների պահպանման և այդ պահանջները խախտելու համար պատասխանատվության վերաբերյալ հրապարակային բացատրական աշխատանքների իրականացում	
	զանգվածային լրատվության միջոցներով Օրենքի դրույթների մեկնաբանությունների ներկայացում,	
	ինտերնետային ցանցում on-line ռեժիմով Հանձնաժողով ներկայացված դիմումներին և բողոքներին արձագանքում	
12.	<i>Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության լրամշակում</i>	
	Օրենսդրական դաշտի բարելավում, ինչպես նաև դրա վերաբերյալ համապատասխան առաջարկությունների ներկայացում՝ իրավասու մարմիններին	տարվա ընթացքում
	Օրենքի դրույթների կիրարկումն ապահովող համապատասխան նորմատիվային բազայի կատարելագործում	
	Եվրոպական և ԱՊՀ մասնակից պետությունների մրցակցային օրենսդրության հետ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության ներդաշնակեցման հետ կապված գործողությունների իրականացում, համապատասխան համաձայնագրերի կնքում:	

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները

Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով, բացի օրենսդրությամբ ամրագրված գործառնություններից, Ծրագիրն իրականացվում է նաև մրցակցության կարգավորման հետևյալ մեխանիզմների կիրառմամբ.

1. Տնտեսվարող սուբյեկտների կողմից Հանձնաժողովին դիմելու նպաստավոր պայմանների և վստահության մթնոլորտի ձևավորում՝ Օրենքի խախտման վերաբերյալ ստացված դիմումներին, ահազանգերին, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին օպերատիվ արձագանքելով (ներառյալ կանխարգելիչ միջոցառումները) և ձեռնարկված միջոցների մասին հանրությանն իրազեկելով:

2. Օրենքի խախտման համար պատասխանատվության ենթարկվելու անխուսափելիության մթնոլորտի ձևավորում՝ Հանձնաժողովի կողմից տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ պարտավորություններ առաջացնող կամ պատասխանատվություն սահմանող որոշումների ընդունմամբ և դրանց կատարման նկատմամբ մշտական հսկողության իրականացմամբ:

3. Համագործակցություն՝

- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ,
- համապատասխան հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ, որոնց

նպատակն է տնտեսական մրցակցության բարենպաստ միջավայրի ձևավորումը:

4. Պետական կառավարման մարմինների կողմից մշակված և տնտեսական մրցակցության հարցերին առնչվող իրավական ակտերի նախագծերի, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունների ներկայացում:

5. Հանձնաժողովի գործունեության թափանցիկության ապահովում՝ պաշտոնական տեղեկագրերի հրատարակման, պաշտոնական ինտերնետային կայքի սպասարկման, մամուլի ասուլիսների, ՁԼՄ-ների հետ համագործակցության, Օրենքի դրույթների, դրանց խախտման հետևանքների, Հանձնաժողովի իրավասությունների և գործառույթների, քննարկվող հարցերի, ընդունվող որոշումների, իրականացվող ծրագրային և օպերատիվ ուսումնասիրությունների, դրանց արդյունքների վերաբերյալ հասարակության իրազեկման միջոցով:

6. Գատավորների և դատական ծառայողների տեղեկացվածության բարձրացում՝ միջազգային փորձագետների և Հանձնաժողովի համապատասխան մասնագետների մասնակցությամբ մրցակցային քաղաքականության իրականացման վերաբերյալ կազմակերպվող սեմինարների միջոցով՝ նվիրված օտարերկրյա (առանձնապես՝ եվրոպական) պետություններում մրցակցային գործերի քննության կարգին և ձևավորված պրակտիկային, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Օրենքի և ենթօրենսդրական ակտերի պարզաբանմանը:

IV. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթներ

Հանձնաժողովը 2009 թվականին միջազգային համագործակցության առումով առաջնային է համարում աջակցության ծրագրերից անցումը զարգացման ծրագրերին:

Կարճաժամկետ ծրագրերը հիմնականում նախատեսվում է ուղղորդել ռեսուրսների գնահատմանը և կարիքների ճշգրտմանը, որոնց նպատակը Հանձնաժողովի կայուն զարգացումը և հանրապետությունում ազատ մրցակցության չափանիշներն ապահովելու համար պահանջվող միջոցների հստակեցումն է և դրանց բավարար ձևերի ու եղանակների մշակումը:

Երկարաժամկետ ծրագրերն ուղղված կլինեն բարեփոխումներ իրականացնելու գործընթացին, որը ներառում է Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների ու Հանձնաժողովի հետ համագործակցող այլ կառույցների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրագործումը և համագործակցության մեխանիզմների մշակումը:

Միջազգային գործունեության և համագործակցության շրջանակներում տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության կիրարկման հիմնական ուղղություններին և գերակա խնդիրներին համապատասխան, Հանձնաժողովը 2009 թվականին շարունակելու է հետևյալ գործընթացները.

- համագործակցություն ինստիտուցիոնալ զարգացման նպատակով,
- համագործակցություն տնտեսական մրցակցության օրենսդրությունը միջազգային չափորոշիչներին և մեխանիզմներին համապատասխանեցնելու նկատառումով, ներառելով ժամանակակից մարտահրավերի հրամայականները,
- իրականացնել համատեղ ուսումնասիրություններ արտերկրյա մրցակցության մարմինների հետ,
- իրականացնել փորձի փոխանակում և լավագույն փորձի կիրառում,
- ընդլայնել քարոզչությանն ուղղված միջոցառումները,
- մասնագետների որակավորման բարձրացում:

Հանձնաժողովը ծրագրային տարում շարունակում է իր աշխատանքները երկկողմ և բազմակողմ հարաբերությունների զարգացման ուղղությամբ, ինչպես նաև միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ, որոնք կարևոր դեր ունեն ամբողջ աշխարհում տնտեսական մրցակցության համընդհանուր քաղաքականության, համագործակցության և փոխըմբռնման նոր հարաբերությունների ձևավորման խնդրում:

Բազմակողմ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովը շարունակելու է մասնակցել Միջազգային մրցակցության ցանց (ՄՄՅ/ICN), ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (ՀԶՄԽ/MCAPI), Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության և ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով համաժողովի (ՄԱԱԶՀ/UNCTAD) տարեկան նիստերին և հանդիպումներին, ինչպես նաև աշխատանքային խմբերի ընթացիկ աշխատանքներին: Այս համագործակցության արդյունքում նախագծվում և հաստատվում է մրցակցության քաղաքականության կիրարկման և օրենսդրությունների համապատասխանեցման առումով համատեղ գործողությունների շրջանակները, լավագույն փորձը և համատեղ ուսումնասիրությունների իրականացման մեխանիզմները:

Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ՀՀ-ԵՄ Գործողությունների ծրագրի իրականացման գործընթացում համագործակցությունը հիմնականում ուղղված է լինելու Թվինինգ⁴ (Twinning) և Թայեքս (TaieX) գործիքների կիրառմամբ նպատակային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը, որոնք նշանակալիորեն կնպաստեն մրցակցության օրենսդրության, իրավական նորմերի և ստանդարտների ներդաշնակեցմանը ԵՄ չափանիշներին:

Հանձնաժողովը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ շարունակելու է համագործակցությունը Հայ-Եվրոպական քաղաքականության և իրավական խորհրդատվության կենտրոնի (AEPLAC) հետ ԵՄ մրցակցության օրենսդրության հիմնական դրույթների ներկայացման և մոտարկման ուղղությամբ:

⁴ TWINNING գործիքի հիմնական առանձնահատկությունն այն է, որ այն սահմանում և տրամադրում է յուրահատուկ և պարտադիր բնույթ կրող արդյունքներ, որոնք նախապես համաձայնեցված են կողմերի միջև՝ ԵՄ օրենսդրության գերակայությունների իրականացման նպատակով: Այն հանգամանքը, որ TWINNING-ը հիմնականում ուղղորդված է դեպի ԵՄ օրենսդրությունը (Acquis), ընդհանուր առմամբ հնարավոր է դարձնում սահմանել գերակա նպատակները և միջոցներ ձեռնարկել դրանց հասնելու ուղղությամբ:

Երկկողմ համագործակցության առաջնահերթ ուղղությունների թվում են Ուկրաինայի հակամենաշնորհային կոմիտեի և Մոլդովայի Հանրապետության մրցակցության պաշտպանության ազգային գործակալության հետ կնքված պայմանագրերի շրջանակներում տեղեկատվության և փորձի փոխանակումը, մասնագետների վերապատրաստումը և համատեղ ուսումնասիրությունների իրականացումը, ինչը կնպաստի երկրների տնտեսական ինտեգրմանը, տնտեսական մրցակցության պաշտպանությանն ուղղված համանման ընթացակարգերի կիրառման ու մասնագիտական կարողությունների զարգացմանը: Հանձնաժողովը երկկողմ կապերի խորացման տեսանկյունից նախատեսում է ընդլայնել համագործակցությունը արտերկրյա համանման այլ մարմինների հետ, այդ թվում՝ Ռումինիայի մրցակցության մարմնի հետ:

Ծրագրային տարում հաշվի առնելով նախորդ տարիների Ամերիկայի Միացյալ նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ/USAID) հետ համագործակցության դրական արդյունքները և ձեռքբերումները, Հանձնաժողովը ներկա փուլի հիմնախնդիրներից ելնելով և առաջացող նոր խնդիրներին միջազգային չափանիշներին համապատասխան լուծումներ տալու նպատակով նախատեսում է իրագործել ինստիտուցիոնալ զարգացման նոր համատեղ ծրագիր:

Երկրի գործընկերության ռազմավարության շրջանակներում տնտեսության զարգացմանն ուղղված ծրագրային ուղղություններից ելնելով՝ Հանձնաժողովը նախատեսում է Համաշխարհային բանկի (ՀԲ/WB) հետ իրագործել համատեղ ծրագիր: Համագործակցությունը շարունակվելու է նաև Մրցակցության պաշտպանության քաղաքականության կիրարկման քարոզչությանն ուղղված միջոցառումների և առավել թափանցիկ գործունեության խթանման, ինչպես նաև հանրապետությունում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության կիրարկման մասին տեղեկատվության փոխանակման ուղղությամբ:

Հանձնաժողովը ծրագրային տարում նախատեսում է շարունակել ակտիվ համագործակցությունը Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության հետ (ԵԱՀԿ/OSCE) հաշվի առնելով այն գործընթացները և խնդիրները, որոնք ծառայած են Հանձնաժողովի առջև իր գործառույթներն իրականացնելու համար:

Հանձնաժողովը որպես հյուրընկալող մարմին՝ ծրագրային տարում իրականացնելու է ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի XXX հոբելյանական նիստը կազմակերպելու աշխատանքները, որը տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետությունում, 2009 թվականի աշնանը:

Հանձնաժողովը նախատեսում է նաև կազմակերպել համաժողովներ և սեմինարներ, որտեղ կքննարկվեն մրցակցային/հակամենաշնորհային օրենսդրության և վերջինիս կիրառման պրակտիկայի արդիական խնդիրները, որոնք ծառայած են միջազգային հանրության առջև: Միաժամանակ շարունակվելու է համագործակցությունն արտերկրյա մրցակցության մարմինների հետ վերապատրաստման, գործերի ուսումնասիրության ընթացքում փորձագետների ներգրավման, փորձի և տեղեկատվության փոխանակման նպատակով:

